



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ:

Խ. ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱԿԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐ
ՊՐՈՖԵՍՈՐ ՍՐԲՈՒՀԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ

17.03.2023թ.

ԿԱՐԾԻՔ

**Ստյոպա Հայրապետի Պետոյանի՝ «Շուշի քաղաքի գրատպության
պատմությունը (1828-1920 թթ.)» Է. 00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ
պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության վերաբերյալ**

2023 թ. մարտի 17-ին տեղի ունեցավ Խ. Արովյանի անվան ՀՊՄՀ հայոց պատմության
ամբիոնի նիստը, որին մասնակցում էին ամբիոնի վարիչի պաշտոնակատար, պատմ. գիտ.
թեկնածու, պրոֆեսոր Է. Գևորգյանը, պատմ. գիտ. դոկտորներ, պրոֆեսորներ Ա. Փիլիպոսյանը, Վ.
Վիրաբյանը, պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ Է. Հովհաննիսյանը, պատմ. գիտ. թեկնածուներ,
պրոֆեսոր Ա. Հարությունյանը, պատմ. գիտ. թեկնածուներ, դոցենտներ Է. Մելքոնյանը, Ա.
Եփրիկյանը, Մ. Եղյանը, Ս. Խաչատրյանը:

Քննարկվեց Ստյոպա Հայրապետի Պետոյանի՝ «Շուշի քաղաքի գրատպության
պատմությունը (1828-1920 թթ.)» թեկնածուական ատենախոսությունը՝ պատմական
գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու համար:

Ելույթ ունեցան ատենախոսության գրախոսներ, պատմ. գիտ. թեկնածու, պրոֆեսոր Ա.
Հարությունյանը, պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ Ս. Խաչատրյանը ովքեր հրապարակեցին իրենց
գրավոր կարծիքները:

Պատասխան ելույթով հանդես եկավ ատենախոս Ս. Պետոյանը:

Քննարկման արդյունքներն ամփոփեց ամբիոնի վարիչի պաշտոնակատար, պատմ. գիտ.
թեկնածու, պրոֆեսոր Է. Գևորգյանը:

Ակնհայտ ճշմարտություն է, որ հայերը սերտ առանջություններ են ունեցել գրատպության արվեստի տարածման հետ: Դեռևս XIV դ. վենետիկցի հայագի նավապետ Անտոն Հայը (Հայկազունը) ի թիվս այլ ճանապարհորդների (Մարկո Պոլո և ուրիշներ) Չինաստանից Եվրոպա բերեց շարժական տառերով գիրք տպագրելու չինական «գաղտնիքը», որը նախադրյալ հանդիսացավ 1440-ական թթ. եվրոպական տպագրության սկզբնավորման համար:

1801-1820 թթ. Հայաստանում գրատպության գլխավոր կենտրոնը մնում էր Էջմիածինը, որտեղ հրատարակվում էին դասագրքեր, կրոնա-եկեղեցական գրքեր, հայ մատենագիրների երկեր, հայագիտական աշխատություններ և «Արարատ» հանդեսը: Նույն ժամանակաշրջանում գրատպությունը թափանցեց Հայաստանի այլ վայրեր և՛ Շուշի, Վան (1858 թ.), Մուշ (1863թ.), Ալեքսանդրապոլ (1876), Նոր Բայազետ (1890 թ.), Գորիս (1909 թ.), ինչպես նաև Կարին, Խարբերդ, Սեբաստիա, Եվդոկիա, Մարզվան, Կարս և այլ բնակավայրեր:

Ստյոպա Պետոյանի թեկնածուական ատենախոսությունը նվիրված է բնիկ հայկական Արցախի կրթամշակութային խոշորագույն կենտրոններից մեկի՝ Շուշի քաղաքի 1828-1920 թթ. գրատպության պատմության ուսումնասիրությանը:

Ներածությունից, չորս գլուխներից, եզրակացությունից, օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկից բաղկացած աշխատանքում ատենախոսը հավուր պատշաճի հիմնավորել է թեմայի արդիականությունը, ուսումնասիրության նպատակն ու խնդիրները, ժամանակագրական շրջանակները, գիտական նորույթն ու կիրառական նշանակությունը, աշխատանքի մեթոդաբանությունը, աղբյուրագիտական հիմքը և թեմայի ուսումնասիրության աստիճանը:

Սկզբից ևեթ նշենք, որ հեղինակը խնդրին մոտեցել է մեծ պատասխանատվությամբ և գիտական բժախնդրությամբ:

Բուն շարադրանքում հեղինակը հարուստ փաստագրական նյութի օգտագործմամբ բացահայտել և համակողմանի քննական վերլուծության է ենթարկել Շուշի քաղաքի գրատպության պատմությունը, դրա զարգացման գործոնները, միտումները և դրսևորումները բնութագրող ընդհանրական և մասնավոր օրինաչափությունները: Նա ընդլայնել ու խորացրել է հարցի ուսումնասիրումը նոր ժամանակաշրջանի խնդիրների հաշվառմամբ և համեմատական մեթոդաբանությամբ ստեղծել մի աշխատանք, որը

հնարավոր է դարձրել ուրվագծել Շուշի քաղաքի գրատպության 1828-1920 թթ. պատմության կարևորությունը:

Ս. Պետոյանը հետազոտվող հիմնախնդիրները դիտարկել է պատմական համոզիչ փաստերի՝ սկզբնաղբյուրների, գրականության, մանրակրկիտ տվյալների պատմաքննական, պատմահամեմատական, ժամանակագրական վերլուծությունների ուսումնասիրության մեթոդաբանությամբ: Ատենախոսությունը գրելիս ատենախոսը հայտնաբերել, ուսումնասիրել և գիտական շրջանառության մեջ է դրել հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն գերմաներեն և լատիներեն լեզուներով լույս տեսած և ատենախոսության լիարժեքությունն ապահովվող ավելի քան 280 անուն գրականություն (<ԱԱ-ի, Մատենադարանի, Ռուսաստանի, Վրաստանի պետական արխիվների, Վրաստանի ձեռագրերի ազգային կենտրոնի, Եղ. Չարենցի անվան ԳԱԹ-ի արխիվի) արխիվային և տպագիր սկզբնաղբյուրներ, մենագրություններ, գիտական հոդվածներ, ինչպես նաև բառարաններ, հանրագիտարաններ, պարբերական մամուլի նյութեր, ատենախոսություններ և էլեկտրոնային շտեմարաններ:

Ուշադրության արժան են ատենախոսության մեջ ամփոփված հեղինակի հիմնավորված և տրամաբանված մոտեցումները, եզրահանգումները, փաստարկված համոզիչ գնահատականները, որոնք երբեմն հակոտնյա են գիտական ընդունված մոտեցումներին:

Բարձր գնահատելով Ս. Պետոյանի ատենախոսության գիտական արժեքը, միաժամանակ հարկ ենք համարում արտահայտել նաև որոշակի ցանկություններ.

1. Ատենախոսության ժամանակաբաժանումը փոքր ինչ ճշգրտման և համահարթեցման կարիք ունի: Հեղինակը ատենախոսության ներածական բաժնում՝ որպես ատենախոսության ժամանակագրական բաժանման սկիզբ, իրավամբ համարում է 1828 թ., սակայն ատենախոսության 1-ին գլխի ժամանակաբաժանման վերնագրի սկիզբ նա ըստ էության ներկայացնում է 1827 թ., երբ Շուշիում բազելյան քարոզիչների կողմից հիմնվեց տպարան:

2. Կարծում ենք, որ ատենախոսության 2-րդ գլխի վերնագիրը փոքր ինչ հստակեցման կարիք ունի: Միգուցե, ավելի ճիշտ կլիներ այն ձևակերպել ոչ թե «Բաղդասար Մետրոպոլիտի տպարանը և նրա գրահրատարակչական գործունեությունը 1830-1850-ական թվականներին», այլ «Շուշիի թեմի (թեմական) տպարանը և նրա գրահրատարակչական գործունեությունը 1830-1850-ական թվականներին»: Երբ նշվում է

Շուշիի Բաղդասար Մետրոպոլիտի տպարանը, այն տպավորությունն է ստեղծվում, որ այն իրոք մասնավոր տպարան էր: Իսկ եթե հեղինակը գտնում է, որ այն իրոք մասնավոր էր, ապա այն պետք է տեղ գտներ ոչ թե 2-րդ, այլ 4-րդ գլխում՝ մասնավոր տպարաններին նվիրված գլխում:

3. 1-ին գլխի փաստագրական պատկերացումներն ու եզրահանգումներն ամբողջական դարձնելու համար վատ չէր լինի, որպեսզի հեղինակը հիմնահարցի քաղաքական դրդապատճառներից ելնելով, բուն շարադրանքի մեջ, կամ թեկուզև տողատակում, նախ ներկայացներ հայկական Շուշի քաղաքի համառոտ պատմությունը, ապա հիմնավորվեր, թե ովքե՞ր էին բազելյան բողոքական քարոզիչները, ինչ գաղափարներ էին դավանում և թե ինչու՞ նրանք տպարան հիմնեցին հենց Շուշիում: Այսինքն ներկայացվեր տպարանի ստեղծման քարոզչական պատճառը:

4. Կատարված աշխատանքն իրոք կշահեր, եթե հեղինակը պահպաներ ատենախոսության գիտական ապարատի՝ տողատակային հղումների միասնականության սկզբունքը: Սովորաբար, ընդունված կարգ է, երբ նույն հեղինակի նույն աշխատությունը երկրորդ անգամ հղելու դեպքում աշխատության վերնագրի փոխարեն նշվում է «նշվ. աշխ.» հապավումը: Սակայն ատենախոսության մեջ ոչ բոլոր դեպքերում է պահպանվել միասնականության այդ սկզբունքը:

5. Ատենախոսության շահեկանությունից ելնելով, գտնում ենք, որ նպատակահարմար է հավելվածի տեսքով ներկայացնել նաև 1828-1920 թթ. Շուշիում տպված գրքերի մատենագիտական ամբողջական ցանկը:

6. Ատենախոսության գլուխներն ու ենթագլուխները չունեն ամփոփումներ:

7. Կարևոր ենք համարում նաև օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկի հետ կապված առաջարկությունները.

ա) Գրականության ցանկում՝ էջ 181-ում հեղինակը ներկայացրել է այսպես կոչված՝ «**Ռուսաստանի Դաշնության ազգային արխիվի**» օգտագործված ֆոնդերի և վավերագրերի ցանկը: Սակայն, ամենայն հավանականությամբ ենթադրելի է, որ իրականում այդպիսի անունով արխիվ Ռուսաստանի Դաշնությունում չկա:

բ) Լեոյի աշխատությունները տեղ են գտել տպագիր «սկզբնաղբյուրների» մեջ, այնինչ պետք է ներկայացվեին «ուսունասիրություններ» ենթաբաժանման մեջ:

գ) Հեղինակի կողմից օգտագործված բառարանները և հանրագիտարանները նպատակահարմար է տեղ գտնելին ոչ թե «ուսումնասիրություններ» ենթաբաժնում, այլ առանձին՝ «բառարաններ և հանրագիտարաններ» նոր բաժանման մեջ:

ե) Ճիշտ կլիներ, որպեսզի գրականության ցանկի մեջ՝ էջ 182-ում՝ «ուսումնասիրություններ» վերնագրի տակ տեղ գտած Ադրբեջանի պատմության արխիվի ուղեցույցը ներկայացնլ «արխիվային վավերագրեր», կամ «տպագիր սկզբնաղբյուրներ» բաժանման մեջ:

զ) «Ազգագրական հանդես», «Արարատ», «Էջմիածին», «Հանդես ամսօրեա», «Նօրք», «Սիօն» ամսագրերը պետք էր ներկայացվելին ոչ թե «պարբերական մամուլ» բաժնի մեջ, այլ «գիտական հոդվածներ» բաժնում՝ միաժամանակ, նշելով հոդվածների հեղինակների և վերնագրերի անունները:

Անտարակույս, նշված դիտողություններն ու ցանկությունները ամենևին չեն նսեմացնում հեղինակի կատարած հսկայածավալ և գիտական բարձրարժեք աշխատանքը: Այն ամբողջովին համապատասխանում է ԲՈԿ-ի կողմից ներկայացվող բոլոր պահանջներին և պատրաստ է հրապարակային պաշտպանության: Հեղինակն էլ լիովին արժանի է իր իսկ հայցած պատմական գիտությունների թեկնածուի Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ գիտական աստիճանին:

Կարծիքը հաստատված է ամբիոնի 2023 թ. մարտի 17-ի նիստում /արձանագրություն թիվ 11/:

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ Հայոց պատմության
ամբիոնի վարիչի պաշտ.՝

պրոֆ. Է. Գևորգյան

Պատմ. գիտ. թեկնածու, պրոֆեսոր Է. Գևորգյանի
ստորագրությունը հաստատում են:
ՀՊՄՀ գիտ. քարտուղար՝



դոց. Մ. Իսախրյան

17.03.2023 թ.